

ԼԻՔԱՆԱՆԻ ՄԷՁ «ՔՈՐՈՆԱ» ԺԱՀՐՈՎ ՎԱՐԱԿՈՒԱԾՆԵՐՈՒՆ ԹԻԻԸ ՀԱՍԱԻ 1242-Ի, ՄԱՀՈՒՄԸ ՊԱՐԱԳԱՆԵՐՈՒՆԸ՝ 27-Ի, ԻՍԿ ԱՊԱՔԻՆԱԾՆԵՐՈՒՆԸ՝ 719-Ի

ՀԱՄԱՏ ՀԱՍԱՆ ԿԸ ՆԱԽԱՏԵՄԷ ԸՆԴՀԱՆՈՒՐ ԶՕՐԱՇԱՐԺԻ ԵՐԿԱՐԱՉԳՈՒՄԸ

«Քորոնա» համաճարակի ճգնաժամին դեմ պայքարը այլեւս մաս կը կազմէ լիբանանցիին առօրեային: Իր ասարտին սեմին գտնուող ընդհանուր զօրաշարժը երկարած գելու մասին երեկ հնչեցին որոշ նախատեսութիւններ:



Այս բոլորին կողքին կրակմարի դրութիւնը կը շարունակուի կէս գիշերէն մինչեւ առաւօտեան ժամը 5:00, իսկ դիմակներ կրելու, ընկերային հեռաւորութիւնը պահպանելու, ինչպէս նաեւ ինքնաշարժի գոյգ թէ անգոյգ թիւերով երթեւեկելու դրութիւնը տակաւին կը պարտադրուի թաղաքայիններուն:

Առողջապահութեան նախարարութեան տեղեկութիւններուն համաձայն, երեկ Լիբանանի մէջ «Քորոնա» ժահրով վարակուածներուն թիւը հասաւ 1242-ի՝ վերջին 24 ժամուան ընթացքին արձանագրելով 9 նոր վարակուածներ:

Նախարարութիւնը յայտնեց, որ ցարդ «Քորոնա» ժահրով 27 վարակուած պարագաներ մահացած են, իսկ 719 ուրիշներ՝ ապաքինած:

Շար.ը՝ էջ 2

ՀՅԴ ԼԻՔԱՆԱՆԻ ԿԵԴՐՈՆԱԿԱՆ ԿՈՄԻՏԵՆ ԸՆԴՈՒՆԵՑ ԺՈՄՊԼԱԾԻ ԿՈՂՄԷ ԳՈՐԾՈՒՂՈՒՄԸ ՈՒՍԻ ՌԱՅԷՄԸ



ՀՅԴ Լիբանանի Կեդրոնական կոմիտէի ներկայացուցիչ, երեսփոխան Յակոբ Բագրատունի երեկ իր գրասենեակին մէջ ընդունեց Ընկերվար յառաջդիմական կուսակցութեան ղեկավար Ուալիտ Ժոմպլաթի խորհրդատու Ռամի Ռայէսը, որ Ժոմպլաթի կողմէ գործուղուած էր:

Հանդիպումին, որուն ներկայ գտնուեցան նաեւ Կեդրոնական կոմիտէի անդամներ Յակոբ Հաւաթեան եւ տղթ. Էլի Թաշճեան,

Քննարկուեցան լիբանանեան իրադարձութիւնները: Ռայէս երեսփոխան Յ. Բագրատունիի փոխանցեց Ժոմպլաթի ողջոյնները՝ աւելցնելով, որ ան յանձնառու կը մնայ Ընկերվար յառաջդիմական կուսակցութեան եւ ՀՅ Դաշնակցութեան միջեւ հինէն եկող երկկողմանի յարաբերութիւններու ամրապնդման:

Ռայէս ընդգծեց, որ կան լիբանանեան ազգային շարք մը հարցեր, որոնց գծով գոյգ կուսակցութիւնները նոյնանդման տեսակէտներ կը բաժնեն:

Յ. Բագրատունի բարձր գնահատեց Ժոմպլաթի նախաձեռնութիւնը, իր կարգին հաստատելով, որ ՀՅԴ Լիբանանի Կեդրոնական կոմիտեն նախանձախնդիր կը մնայ լիբանանեան ազգային մակարդակի վրայ Ընկերվար յառաջդիմական կուսակցութեան հետ խորհրդակցութիւններն ու համագործակցութիւնը շարունակելու, յատկապէս տիրող դժուար պայմաններուն ընթացքին:

Հանդիպումին ընթացքին քննարկուեցան երկրին թաղաքական, տնտեսական եւ ընկերային իրավիճակը՝ լիբանանեան ներքին կացութեան վատթարացման իբրեւ հետեանք բազմաթիւ վտանգներուն լոյսին տակ:

Ռայէս ՀՅԴ Լիբանանի Կեդրոնական կոմիտէին ներկայացուց երկիրը յուզող տնտեսական տագնապէն դուրս գալու Ուալիտ Ժոմպլաթի պատկերացումը՝ նկատի ունենալով բարեկարգումի այն առաջարկները, որոնք նախապէս տնտեսական ծրագիրով յայտարարուած էին:

ԹՐԱՄԺ ՈՒԱՇԻՆԿԹԸՆԻ ՄԷՁ ՀԱՉԱՐԱՌՈՐ ԶԻՆՈՒՈՐՆԵՐՈՒ ՏԵՂԱԿԱՅՈՒՄԸ ԿԸ ՅԱՅՏԱՐԱՐԷ. ՊԱՅՏԸՆ ԶԻՆՔ Կ'ԱՄԲԱՍՏԱՆԷ ԲԱՆԱԿԸ ԱՄԵՐԻԿԱՅԻՆԵՐՈՒՆ ԴԷՄ ՕԳՏԱԳՈՐԾԷԼՈՒ ՅԱՆՑԱՆՔՈՎ

Սպիտակ տան բանքեր Զելի Մաքիսի մամլոյ ասուլիսի ընթացքին յայտարարեց, որ յաւելեալ «դաշնակցային ուժեր» պիտի տեղակայուին ամբողջ երկրի տարածքին՝ կատաղի բողոքի ցոյցերու ժամանակ իրաւապահ մարմիններուն աջակցելու համար:

«Չեմ ուզեր յառաջ անցնիլ այն գործողութիւններէն, որոնց մասին պիտի յայտարարուի, սակայն կրնամ ըսել, թէ յաւելեալ դաշնակցային ուժեր պիտի տեղակայուին, ինչպէս նաեւ կեդրոնական հրամանատարական կեդրոն պիտի



ստեղծուի տեղական կառավարութիւններուն հետ», ըսաւ բանքերը:

Շար.ը՝ էջ 4

ԼԻՊԻԱԿԱՆ ՀԱԿԱՄԱՐՏՈՒԹԵԱՆ ԿՈՂՄԵՐԸ ՀԱՄԱՉԱՅՆԱԾ ԵՆ ՎԵՐՍԿՍԻԼ ԶԻՆԱԴԱԴԱՐԻ ՇՈՒՐՁ ԲԱՆԱԿՑՈՒԹԻՒՆՆԵՐՈՒՆ

Լիպիոյ մէջ ՄԱԿ-ի առաքելութիւնը երեկ յայտարարած է, որ լիպիական հակամարտութեան կողմերը համաձայնած են վերսկսիլ զինուորական կոմիտէի բանակցութիւններուն: Այս մասին կը հաղորդէ «ՌԻՄ Նովոսթի» լրատու գործակալութիւնը:

«Լիպիոյ աջակցութեան հարցերով ՄԱԿ-ի առաքելութիւնը կ'ողջունէ այն փաստը, որ Ազգային համաձայնութեան կառավարութիւնը եւ Լիպիոյ ազգային բանակը համաձայնած են վերսկսիլ զինադադարի վերաբերեալ բանակցութիւններուն՝ ըստ փետրուան-



րի 23-ին ՄԱԿ-ի կողմէ զինուորական կոմիտէի (5+5) բանակցութիւններու ժամանակ ներկայացուած համա-

ձայնութեան ծրագիրին», ըսուած է առաքելութեան յայտարարութեան մէջ:

Շար.ը՝ էջ 4

ՊԱՊԱՉԱՐ. «ՊԻՏԻ ՊԱՇՏՊԱՆԵՔ ԽՏՐԱԿԱՆՈՒԹԵԱՆ ՈՒ ՑԵՂԱՊԱՇՏՈՒԹԵԱՆ ԴԷՄ ՈՐԵՒԷ ԲԱՅԼ ԵՒ ՄԻՆԱԿ ՊԻՏԻ ՉՉԳԵՆՔ ԸՆԿԵՐՆԵՐԸ» ՏԻՆՔԻ ԱՅՐԻՒՆ ԵՒ ՀԻՄՆԱԴՐԱՄԻՆ ՄՊԱՌՆԱՅԱԾ ԱՆՁԸ ԳՈՐԾԱԾ Է ԱԶՐՊԷՅՃԱՆՑԻ ԹԵԼԱԴՐԱՆՔՈՎ

Թուրքիոյ տնտեսութեան եւ արտաքին գործոց նախկին նախարար Ալի Պապաշան իր աջակցութիւնը յայտնած է Հրանդ Տիքի ալիին եւ «Հրանդ Տիք» հիմնադրամին՝ վերջերս անոնց ուղղուած մահուան սպառնալիքներուն համար: Այս մասին կը հաղորդէ թրքական «Կազէթետուկար» կայքը:

Շար.ը՝ էջ 4



ԺԱՉԱՐԻ ՄԻԱՑԵԱԼ ՆԱՀԱՐԳՆԵՐՆ ՈՒ ԵՒՐՈՊԱԿԱՆ ՊԵՏՈՒԹԻՒՆՆԵՐԸ Կ'ԱՄԲԱՍՏԱՆԷ՝ ՍՈՒՐԻՈՅ ՄԷՁ ՊԱՏԵՐԱԶՄԱԿԱՆ ՈՃԻՐՆԵՐ ԳՈՐԾԷԼՈՒ ՅԱՆՑԱՆՔՈՎ

ՄԱԿ-ի մէջ Սուրիոյ դեսպան Պաշար Ժաաֆարի ՄԱԿ-ի ընդհանուր քարտուղարին ու Ապահովութեան խորհուրդի նախագահին յոյճ բողոք-նամակ մը, որուն մէջ Միացեալ Նահանգներն ու եւրոպական երկիրները ամբաստանեց Սուրիոյ մէջ պատերազմական ոճիրներ գործելու յանցանքով:

Ան յայտնեց, որ ամերիկեան, բրիտանական, ֆրանսական, թրքական եւ իսրայելեան կառավարութիւնները ահաբեկչական զինեալներն ու ահաբեկչական կազմակերպութիւնները ֆինանսաւորելով ու զինելով գործակաւորներու ճամբով պատերազմ մղելու հանգրուանէն անցած են զինուորական ուղղակի նախադրածական ու բռնագրաւումի՝ ուղղակի պատերազմի:

Ժաաֆարի իր նամակին մէջ յայտնեց, որ մայիս ամսուան կէտերուն, երբ ցորենի



եւ գարիի ցանքերը հնձելու ժամանակ եր «ամերիկեան եւ թրքական բռնագրաւման ուժերը» հրկիզած են Սուրիոյ ԺԵՊԻԷ շրջանին բերքերը, ինչ որ տնտեսական նոր ահաբեկչութիւն մըն է, որ համագործակցող ժողովուրդին դեմ գործուած պատերազմական ոճիրի:

Շար.ը՝ էջ 4

ՄԱՏՈՒՐՈ ՄՕՏ ՕՐԷՆ ՊԻՏԻ ԱՅՑԵԼԷ ԻՐԱՆ

Վենեզուելայի նախագահ Նիքոլաս Մատուրօ կը յայտարարէ, թէ գործակցութեան պայմանագիրներ ստորագրելու եւ անձամբ իրանցի ժողովուրդին շնորհակալութիւն յայտնելու համար պիտի այցելէ Իրան:

Մատուրօ յայտնեց, որ Իրան պիտի այցելէ ուժանիւթի եւ այլ մարդերու մէջ գործակցութեան համաձայնագիրներ կնքելու համար՝ շեշտելով. «Պարտաւորութիւնս է անձամբ երթալ իրանցի ժողովուրդին շնորհակալութիւն յայտնելու»:

ԱՄՏՐԻՈՅ ԱՉԳԱՅԻՆ ԽՈՐՀՈՒՐԴԸ ՄԻԱՉԱՅՆՈՒԹԵԱՐՔ ՎԱԵՐԱՅՈՒՑԱԾ Է ՀԱՅԱՍՏԱՆ-ԵՒՐՈՊԱԿԱՆ ՄԻՈՒԹԻՒՆ ՀԱՄԱՉԱՅՆԱԳԻՐԸ

Աստրիոյ Ազգային խորհուրդը միաձայնութեամբ վաւերացուցած է Հայաստան-Եւրոպական Միութիւն Համապարփակ եւ ընդլայնուած գործընկերութեան համաձայնագիրը: Այս մասին Դիմատետրի իր էջին վրայ գրառումով տեղեկացուցած է Հայաստանի Ազգային ժողովի «Իմ քայլը» խմբակցութեան անդամ Վիկտոր Ենգիբարեանը:



«Արմենփրես»-ի հաղորդումով՝ ան իր գրառումին մէջ ներկայացուցած է Աստրիոյ Ազգային խորհուրդի Աստրիա-Հարաւային Կովկաս պատգամաւորական խումբի նախագահ Կուստուրու Քուկլերի ելոյթի տեսագրութիւնը եւ անոր խօսքին ոչ պաշտօնական թարգմանութիւնը, զոր կը ներկայացնենք ստորեւ:

«Յարգելի՛ գործընկերներ, Իբրեւ Աստրիա-Հարաւային Կովկաս պատգամաւորական խումբի նախագահ, որ Ազրպէյճանի եւ Վրաստանի հետ կը ներառէ նաեւ Հայաստանը, կ'ուզեմ անդրադառնալ օրակարգի առաջին հարցին, որ կը վերաբերի Եւրոպական Միութեան եւ Հայաստանի միջեւ Համապարփակ եւ ընդլայնուած գործընկերութեան համաձայնագրի վաւերացման:

Հայաստանի հետ մեզ կը կապեն դարաւոր բարեկամական յարաբերութիւններ: Հաւանաբար շատեր Հայաստանը կը ճանչնան «Ռատիօ Երեւան»-ի կատակներէն, սակայն ատիկա շատ քիչ է՝ Հայաստանը առաջարկելու շատ բան ունի: Այս համաձայնագիրը, որուն կողմէն եւ Եւրոպական Միութիւնը եւ Հայաստանը, եւ զոր կը վաւերացնեն Եւրոպական Միութեան անդամ երկիրները, ունի երկու ուղղուածութիւն, որմէ առաջինը՝ ժողովրդավարութեան ամրապնդումն է: Շատեր կը յիշեն 2018-ին Հայաստանի մէջ տեղի ունեցած յեղափոխութիւնը, որ կոչուեցաւ «թաւշայ», երբ երկրի այն ժամանակուան ղեկավարի սահմանադրական փոփոխութեան մէկ հնարքով իր հետագայ պաշտօնավարումը ապահովելու ցանկութիւնը յանգեցուց բողոքի ցոյցերու: Այդ ցոյցերը խաղաղ էին: Հայաստանը պէտք է շնորհաւորել անոր համար, քանի որ մինչ այդ նման բնոյթի ցոյցեր չէին եղած: Տեղի ունեցան վարչապետի ազատ ընտրութիւններ, ինչ որ ողջունելի էր ԵԱՀԿ-ի կողմէ:

Շար.ը՝ էջ 4

«ՔՈՐՈՆԱ» ԺԱՀՐԸ ՀԱՅԱՍՏԱՆԻ ԵՒ ԱՐՑԱՆԻ ՄԷՁ

ՄԷԼ օրուան ընթացքին, 2 յունիս առաւօտեան դրութեամբ, Հայաստանի մէջ «Քորոնա» ժահրին պատճառով մահացած է 19 հոգի, արձանագրուած է 517 նոր դէպք: Ապաքինած է 25 հոգի: Բացասական քննութիւններու թիւը 732 է:



Հաստատուած դէպքերու ընդհանուր թիւը 10.009 է, ապաքինածներունը՝ 3427: Ապաքինման ընթացքի մէջ եղող վարակուածներուն թիւը 6368 է, իսկ կատարուած քննութիւններու ընդհանուր թիւը՝ 59.917: Մինչեւ 2 յունիս 2020 Հայաստանի մէջ «Քորոնա» ժահրով մահացածներուն թիւը 158 է:

Հիւանդութիւններու վերահսկման եւ կանխարգիւման ազգային կեդրոնի գլխաւոր տնօրէն Արտաւազդ Վանեան գրոյցի մը ընթացքին ըսած է, թէ մայիս ամսուան ընթացքին Հայաստանի մէջ «Քորոնա» ժահրով վարակուածներուն թիւը մարտ ամսուան ընթացքին արձանագրուած թիւին համեմատ աճած է 13 անգամ:

Միւս կողմէ, Արցախի մէջ հաստատուած է «Քորոնա» ժահրով վարակուածներու ընդհանուր 46 դէպք, որոնցմէ 26-ը՝ բուժուած:

«Արմենփրես»-ի հաղորդումով՝ այս մասին կը տեղեկացնեն Արցախի Հանրապետութեան առողջապահութեան նախարարութենէն:

Արցախի մէջ ընդհանուր առմամբ քննութեան ենթարկուած է 926 մարդ, կայ 100 մեկուսացուած անձ: Այսպիսով՝ կայ «Քորոնա» ժահրով հաստատուած 3 նոր դէպք:

ՆԱԽԱԳԱՀ ԱՌԻՆ ԱՅՍՕՐ ԿԸ ՆԱԽԱԳԱՀԷ ՖԻՆԻԻԼ-Ի ՌԻԺԵՐՈՒ ՊԱՇՏՈՆԱՎԱՐՈՒԹԵԱՆ ԵՐԿԱՐԱԶԳՄԱՆ ՎԵՐԱԲԵՐՈՂ ՆԻՍՏԻ ՄԸ

Հանրապետության նախագահ զոր. Միշել Աուն այսօր առաւօտեան նախագահական պալատին մէջ պիտի նախագահէ հարաւային Լիբանանի մէջ ՖԻՆԻԼ-ի միջազգային խաղաղապահ ուժերու պաշտօնավարութեան երկարածգման վերաբերող Նիստի մը:

Նիստին ներկայ պիտի գտնուին վարչապետ Հասսան Տիապ, արտաքին գործոց եւ արտերկրի լիբանանցիներու հարցերու նախարար Նասիֆ Յըթթի, ինչպէս նաեւ ՄԱԿ-ի Ապահովութեան խորհուրդի 5 մնայուն անդամ երկիրներու ղեկավարներն ու Լիբանանի մէջ ՄԱԿ-ի ընդհանուր քարտուղարի անձնական ներկայացուցիչ Իան Քիպի:

Նախատեսուած է, որ նախագահ Աուն ներկայացնէ Լիբանանի կեցուածքը՝ ՖԻՆԻԼ-ի ուժերուն պաշտօնավարութիւնը երկարածգելու մասին՝ նկատի ունենալով, որ ժամանակը հասած է արդէն, որ Նիւ Եորքի մէջ այս թղթածրարը քննարկուի:

Նախագահ Աուն երէկ ընդունեց Հզօր Լիբանան համախմբումի անդամ երեսփոխան Էտկար Թրապուլսին, որուն հետ քննարկեց լիբանանեան իրադարձութիւնները, յատկապէս քաղաքական եւ կրթական մարզերը յուզող հարցերը:



Հանդիպումին ընթացքին Թրապուլսի յայտնեց, որ ինք հանրապետութեան նախագահին փոխանցած է, թէ ջանքեր ի գործ կը դնէ ուսումնական տարեշրջանի, ծնողներուն կացութեան, ինչպէս նաեւ ուսուցիչներուն իրաւունքներու եւ պետական թէ անձնական դպրոցներու պաշտպանութեան ի խնդիր:

Թրապուլսի առաջարկեց պաշտպանել անձնական դպրոցները եւ կրթութեան նախարարութեան յատկացում կատարել՝ իւրաքանչիւր աշակերտի համար 2 միլիոն Լ. ոսկի վճարելով, որպէսզի կարելի ըլլայ այդ մարզը փրկել քանդումէ:

Ան յայտնեց նաեւ, որ նախագահ Աունի հետ քննարկած է երկրին տնտեսական իրադարձութիւնները, գաղթականներուն թղթածրարն ու Հիլան եւ Միէ Միէ գիւղաքաղաքներուն բնակիչներուն իրաւունքներու վերադարձի պարագան:

Նախագահ Աունի այցելեց նախկին երեսփոխան Էմիլ Բահմէ, որուն հետ քննարկեց լիբանանեան իրադարձութիւնները:

Միւս կողմէ, Իտալիոյ ազգային տօնին առիթով, նախագահ Աուն շնորհաւորական հեռագիր մը յղեց Իտալիոյ նախագահ Սերժո Մաթարելլայի: Ան բարձր գնահատեց լիբանանեան-իտալական երկկողմանի յարաբերութիւններն ու տարբեր մարզերու մէջ առկայ գործակցութիւնը:

ՆԱԽԱՐԱՐ ՕՀԱՆԵԱՆ - ԳԷՈՐԳԵԱՆ ԸՆԴՈՒՆԵՑ ՀԵԾԵԼԱՐՇԱԻԻ ԼԻԲԱՆԱՆԵԱՆ ՖԵՏԵՐԱՄԻՈՒԻ ՄԷԿ ՊԱՏՈՒԻՐԱՎՈՒԹԻՒՆԸ



Երիտասարդութեան հարցերու եւ մարմնակրթութեան նախարար Վարդիէ Օհանեան-Գեորգեան երէկ ընդունեց Հեծելաքշափի լիբանանեան ֆետերասիոնի մէկ պատուիրակութիւնը՝ գլխավորութեամբ ֆետերասիոնի նախագահ Վալէ Ծատուրեանի եւ ներկայութեամբ նախարարութեան ընդհանուր տնօրէն Շէյտ Խիյամէի:

Հանդիպումին ընթացքին Վ. Ծատուրեան ներկայացուց «Քորոնա» համաճարակին ընթացքին ֆետերասիոնին մշակած աշխատանքային ուղեգիծը, ինչպէս նաեւ մարզական աշխատանքները շարունակելու գործելանոցը, յատկապէս նկատի ունենալով, որ հեծելաքշափ Լիբանանի փոխանութիւնը կը զուգահիսի յուլիս ամսուան վերջերուն: Ան անդրադարձաւ այս տարուան ընթացքին կատարուելիք ֆետերասիոնի ընտրութիւններուն:

Նախարար Օհանեան-Գեորգեան իր կարգին ներկայացուց այն դասաւորումները եւ սահմանափակումները, որոնք որդեգրուեցան «Քորոնա» ժաիրին դէմ պայքարի ազգային յանձնախումբին կողմէ:

Ան անդրադարձաւ նաեւ այն չափանիշներուն, որոնց հիման վրայ կարելի պիտի ըլլայ մարզական կեանքը մօտիկ ապագային վերաշխուժացնել՝ պահպանելով բոլորին բարօրութիւնը, հետեւելով առողջապահութեան ու ներքին գործոց եւ քաղաքապետութեանց հարցերու նախարարութեան ցուցմունքներուն:

Շար.ը՝ էջ 3

ԿԱՌԱՎԱՐՈՒԹԻՒՆԸ ԸՆԴԳԾԵՑ ԽԱՂԱՂ ՅՈՅՑԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ԻՐԱՒՈՒՆՔԸ ԵՒ ՆՇԱՆԱՎՈՒՄՆԵՐԸ ՅԵՏԱԶԳԵՑ ՅԱՌԱԶԻԿԱՅ ՇԱՐԹՈՒՄՆ

Վարչապետ Հասսան Տիապ երէկ վարչապետարանին մէջ նախագահեց կառավարութեան ընթացիկ նիստին, որմէ ետք տեղեկատուութեան նախարար Մանալ Ապտէլ Սամատ յայտնեց, որ նախարարաց խորհուրդը հետապնդեց ուժանիւթի նախարարութեան կողմէ Պըսրիի ամբարտակին աշխատանքներուն վերաբերող մանրամասնութիւնները եւ կոչ ուղղեց բոլոր անոնց, յատկապէս քաղաքացիական ընկերութեան ներկայացուցիչներուն, որոնք այս հարցով առաջարկ ունին, ներկայանալու տեղեկատուութեան նախարարութեան կազմակերպած խորհրդակցական հանդիպումին:

Ապտէլ Սամատ ըսաւ, թէ Նիստին ընթացքին վարչապետ Տիապ հաստատած է, որ շուկային մէջ պիտի ճշդուի սննդեղէնի շուրջ 30 տեսակ, որոնք մատչելի սակերով



պիտի ըլլան:

«Ան աւելցուց նաեւ, որ լումայափոխները այսօր պիտի վերսկսին աշխատանքի՝ վերջ տալով իրենց գործադուլին», դիտել տուաւ Ապտէլ Սամատ:

Տեղեկատուութեան նախարարը ընդգծեց խաղաղ ցոյցեր կատարելու իրաւունքը:

Շար.ը՝ էջ 4

«ԱՐՏՈՆԵԼԻ ԶԷ ՀԱՅՐԵՆԻՔԻՆ ԱՆՎՏԱՆԳՈՒԹԻՒՆԸ ՅՆՅԵԼ ԵՒ ԱՆՈՐ ՀՐԱՊԱՐԱԿՆԵՐԸ ՅԱՆՁՆԵԼ ՅՈՅՑԵՐԸ ՇԱՀԱԳՈՐԾՈՂ ԽՈՒԼԻԿԱՆՆԵՐՈՒՆ»

ՇԵՏՏԵՑ ՇՕՐ. ԱՈՐԱ

Լիբանանեան բանակի հրամանատար զոր. Ժոզեֆ Աուն երէկ այցելեց Կիւսիային Լիբանան, ուր ստուգեց բանակի 2-րդ, 10-րդ եւ 12-րդ ջոկատները, ինչպէս նաեւ յատուկ միջամտութեան ուժերու Ա. վաշտը:

Բանակայիններուն ուղղած իր խօսքին մէջ զոր. Աուն յայտնեց, որ Թրիփոլին պատմութեան եւ հնութեան քաղաք է՝ աւելցնելով, որ անոր արժանապատուութիւնը բանակին արժանապատուութիւնն է, եւ բանակը բնաւ պիտի չլքէ Թրիփոլին:

Շօր. Աուն, ստուգելէ ետք վերոնշեալ ջոկատները, հանդիպում ունեցան սպաներուն եւ զինուորականներուն հետ եւ անոնց փոխանցեց անհրաժեշտ ցուցմունքները:

«Վըբար բանակին պահեստի ուժն է եւ հայրենիքին բազմիկն մեծ զոհողութիւններ կատարած է: Բանակայինները ժողովուրդին չեն դիմադրեր, այլ օրէնքի եւ ցուցմունքներու հիման վրայ կը կատարեն իրենց զինուորական գործողութիւնները: Բանակայինները կը դիմարեն անոնց, որոնք խուլիկանութիւններ ու վայրագութիւններ կը կատարեն եւ հաստատութիւններու, կառավարական կերպիւններու, ինչպէս



նաեւ պետական եւ սեփական կալուածներու վրայ կը յարձակին», ըսաւ ան:

Շօր. Աուն շեշտեց, որ բանակը իր ժողովուրդին թշնամին չէ, այլ կը պաշտպանէ ժողովուրդն ու ցուցարարները: «Քաղաքացիական անվտանգութիւնը պահպանելու մեր պատասխանատուութիւնը միացեալ է, եւ արտօսելի չէ հայրենիքին անվտանգութիւնը ցնցել, ինչպէս նաեւ հայրենիքին հրապարակները յանձնել ցոյցերը շահագործող խուլիկաններուն:

Մենք լուռ կ'աշխատինք՝ համաձայն մեր համոզումներուն, որոնք ազգային սկզբունքներ են: Մեզի համար բանակին հասցեին կատարուած զրպարտութիւնները անտեսելի են, որովհետեւ մարտահրաւերները մեծ են, իսկ զանոնք յաղթահարելու կամքը՝ շատ անելի մեծ», շեշտեց զոր. Աուն:

Բանակի հրամանատարը կոչ ուղղեց զինուորներուն, ինքնազայումի ենթարկուելու, հակառակ անոր որ տնտեսական տագնապը մեծ է, իսկ բանակայինները ժողովուրդին մաս կը կազմեն եւ անոնց նման կը տառապին: «Կարելի չէ բանակը ազգային հարցերէն հեռու պահել, եւ մեր գիտակից ու պատասխանատուութիւնը միացնելով Լիբանանը պիտի հասցենք ապահով տեղ», ընդգծեց զոր. Աուն՝ հաստատելով նաեւ, որ քաղաքացիները իրենց կարգին պէտք է նեցուկ կանգնին բանակին, որ կը զոհուի հայրենիքին, ժողովուրդին ու կառոյցներուն պաշտպանութեան ի խնդիր», եզրափակեց զոր. Աուն:

ԼԻԲԱՆԱՆԵԱՆ ԿԱՐՃ ԼՈՒՐԵՐ

- ԱՐՏԱԶԻՆ գործոց եւ արտերկրի լիբանանցիներու հարցերու նախարար Նասիֆ Յըթթի երէկ ընդունեց Ընդհանուր ապահովութեան ընդհանուր տնօրէն հազարապետ-զօրավար Ապպաս Իպրահիմը, որուն հետ քննարկեց լիբանանեան իրադարձութիւնները: Հըթթիի այցելեց նաեւ Լիբանանի մէջ Սպանիոյ ղեկավար Խոսէ Մարիա Ֆերին, որուն հետ արժարժուեցաւ հարաւային Լիբանանի մէջ ՖԻՆԻԼ-ի միջազգային խաղաղապահ ուժերուն պաշտօնավարութիւնը երկարածգելու թղթածրարը:

- ԽՈՐՀԱՐԱՐԱՐԱՆ փոխնախագահ Էլի Ֆըրզլի երէկ ընդունեց Լիբանանի մէջ Եգիպտոսի ղեկավար Եասեր Սոհամետ Ալաուին, որուն հետ քննարկեց Լիբանանի եւ շրջանին ընդհանուր իրավիճակը:

- ՆԱԽԿԻՆ վարչապետ Սամատ Հարիրի գրասենեակը երէկ հրապարակեց հաղորդագրութիւն մը, որուն մէջ հերքուեցան «Ախպար» օրաթերթի հրապարակած այն տեղեկութիւնները, թէ Հարիրիի խորհրդատուները նամակներ կը յղեն Միջազգային դրամական ֆոնտին եւ զայն կը իրաւրեն Լիբանանի դէմ, որպէսզի ան օժանդակութիւններ չյատկացնէ Լիբանանին եւ խանգարելու համար Միջազգային դրամական ֆոնտին ու Լիբանանի

- միջեւ երկխօսութիւնը:
- ՓԱՂԱՎԱՌՈՐ կուսակցութիւնը երէկ գումարեց իր ելեկտրոնային ընթացիկ նիստը, որուն ընթացքին հաստատեց, թէ իրենց փոփոխութեան կարողութիւն ունին՝ աւելցնելով, որ շաբաթ, 6 յունիս 2020-ի ցոյցերուն ընթացքին այս մէկը պիտի փաստեն Պէյրութի հրապարակներուն վրայ:

- ՏՆՆԻԻԷ քաղաքացիներ անձնասթաւերու կողմէ կրակոցի թիրախ դարձան՝ Զըրնէի Սաուտայի մօտակայքը: Ներքին ապահովութեան ուժերը այս դէպքին շուրջ հետաքննութիւն բացած են:

- ԺՈՂՈՎՐԻՅՅԻՆ շարժումին մաս կազմող ցուցարարներ երէկ Պէյրութի Արդարութեան պալատին դիմաց բողոքի ցոյց մը կատարեցին՝ պահանջելով դատական իշխանութիւններուն անկախութիւնն ու մերժելով քաղաքական անձնակազմութիւններուն կողմէ դատական իշխանութիւններուն աշխատանքին միջամտութիւնները:

«ԱԶԳԱԿ»-Ի ՖՈՐՏԻՆ

- Քաջալերելով «Ազդակ»-ի աշխատանքները՝ Տէր եւ տիկին Յակոբ եւ Թալին Գլաշեան 200\$

ԼԻԲԱՆԱՆՅԻ ԿԻՆԵՐՈՒ ԱԶԳԱՅԻՆ ԽՈՐՀՈՒՐԳԸ ԱՅՑԵԼԵՑ ՆԱԽԱԳԱՀ ԱՌԻՆԻ ԵՒ ՎԱՐՉԱՊԵՏ ՏԻԱՊԻ

Հանրապետութեան նախագահ զոր. Միշել Աուն նախանցեալ օր նախագահական պալատին մէջ ընդունեց Լիբանանցի կիներու ազգային խորհուրդը, նախագահութեամբ՝ Զլոտին Ռուքոզի: Պատուիրակութեան մաս կազմեց նաեւ Լիբանանցի կիներու ազգային խորհուրդի անդամ Սօսի Փօլատեան:



Այս այցելութիւնը կատարուեցաւ Լիբանանցի կիներու ազգային խորհուրդի պաշտօնավարութեան աւարտին առիթով:

Հանդիպումին ընթացքին նախագահ Աուն շեշտեց նախորդ երեք տարիներուն Լիբանանցի կիներու ազգային խորհուրդին իրագործած աշխատանքին կարեւորութիւնը՝ ի խնդիր կնոջական հարցերու ծառայութեան:

Նախագահ Աուն շնորհաւորեց խորհուրդն ու անոր նախագահը՝ իրագործուած այս աշխատանքին առիթով:

«Լիբանանցի կիներու ազգային խորհուրդի անդամները Լիբանանի ազգային միասնականութիւնը երաշխաւորելու հսկայ կարողութիւն ունին, իսկ ձեռ կատարած աշխատանքը՝ քաղաքացիական մատենավարութեան առումով՝ բոլորին միջեւ հաւասարութիւն պարտադրեց: Կը յանձնարարեմ ձեզի, որ այս ուղղութեամբ յառաջ երթաք, որովհետեւ օրէնքներուն միացումով է միայն, որ Լիբանան միասնական կը դառնայ: Ես այս մասին կը խօսիմ իմ ամբողջ կենսաբան փորձառութենէն մեկնելով», ըսաւ ան:

Նախագահ Աուն յայտնեց, որ ինչ որ Լիբանանցի կիներու ազգային խորհուրդը փորձած է իրականացնել, կարիքը ունի յաւելեալ զարգացումի, յանձնառութեան եւ յարգանքի, յատկապէս բնակարանային բնութեան դիմաց ապահովութեան երաշխաւորման վերաբերեալ:

Նախագահ Աուն շեշտեց, որ ինք պիտի հետապնդէ այդ աշխատանքը եւ կոչ ուղղեց բոլորին, որ այս ուղղութեամբ կատարեալ նուիրումով աշխատին:

«Ղուք ձեռ ունեցուն մեծ դեր ունիք, եւ ես ամենայն բարին կը մաղթեմ ձեզի», եզրափակեց ան:

Հանդիպումին ընթացքին Ռուքոզ շնորհակալութիւն յայտնեց նախագահ Աունի՝ անոր ցուցաբերած վստահութեան համար եւ ներկայացուց Լիբանանցի կիներու ազգային խորհուրդին իրագործած նուաճումները:

ՎԱՐՉԱՊԵՏԱՐԱՆԻՆ ՄԷՋ

Վարչապետ Հասսան Տիապ իր կարգին վարչապետարանին մէջ ընդունեց Լիբանանցի կիներու ազգային խորհուրդը, որ դարձեալ ներկայացուց իր գործունեութիւնն ու արձանագրած իրագործումները:



Վարչապետ Տիապ ողջունեց խորհուրդը եւ հաստատեց, որ ինք կը հաւատայ լիբանանցի կնոջ դերակատարութեանն ու նեցուկ է անոր:

Տիապ ընդգծեց գործադիր եւ օրէնսդրական իշխանութիւններուն մէջ լիբանանցի կնոջ դերակատարութեան կարեւորութիւնը՝ հաստատելով, որ ինք կը զօրակցի ընտրական օրէնքին մէջ նկատի ունենալու կնոջ ներկայացուցչութեան չափաբաժինը, որպէսզի լիբանանցի կնոջ յաւելեալ գործունեութիւն արձանագրէ քաղաքական մարզին մէջ:

ԼԻԲԱՆԱՆԻ ՄԷՋ «ՔՈՐՈՆԱ» ԺԱՅՐՈՎ . . .

Շարունակուած Ա. Էջէն

Նախարարութեան համաձայն, նախորդ 24 ժամուան ընթացքին տեղացիներուն շարքին արձանագրուած են 2 վարակուածներ, իսկ արտերկրի լիբանանցիներուն շարքին՝ 7:

Առողջապահութեան նախարար Համատ Հասան երէկ յայտնեց, որ ինք կը նախատեսէ ընդհանուր զօրաշարժը երկու շաբաթով երկարածգել՝ այնքան ատեն որ Առողջապահութեան համաշխարհային կազմակերպութիւնը կը յանձնարարէ «Քորոնա» ժաիրի վարակումը կասեցնելու նախագգուղութիւնները շարունակել, ինչպէս նաեւ դարձեալ զօրաշարժի ենթարկուելու կազմ ու պատրաստ ըլլալ:

Միւս կողմէ, «Սանիթա» ընկերութիւնը երէկ առողջապահութեան նախարարութեան նուիրեց մէկ միլիոն դիմակներ, որոնք լիբանանեան արտադրութիւնն են:

Առողջապահութեան նախարարութիւնը հաստատեց, որ այդ դիմակները պիտի ցրուէ պետական հաստատութիւններու վարչութիւններուն, քաղաքապահութեան համադաշնակցութիւններուն, քաղաքապետարաններուն, ապահովութեան ուժերուն, ինչպէս նաեւ քաղաքացիական միութիւններուն:

ԻՆՉՆ Է, ՈՐ «OFFLINE» Է, ԵՐԲ ՄԵՆՔ «ONLINE» ԵՆՔ ՄՏՈՐՈՒՄՆԵՐ ԿՐԹԱԿԱՆ ՈԼՈՐՏԻՆ ՄԷՋ

Առցանց ուսուցումը նորություն չէ կրթական եւ ակադեմական մարզերում մէջ։ 20-րդ դարու ընձեռած արդիւնաւետ կարելիութիւններէն մէկն է ան, որուն տարբեր հարթակները եւ դասաւանդումի հետաքրքրական միջոցները հետզհետէ դարձան հիմնական ու կայացած մեթոտաբանութիւն։ Առցանց ուսուցումը՝ դասերը առաւել հաճելի եւ գրաւիչ դարձնող, պատանիին եւ երիտասարդին նախապիրած առօրեայ «լեզուն» խօսող եւ անհատական տրվելու տարբեր եղանակներ գոհացնող, բոլորին հասնելի եւ մատչելի աշխարհ մը դարձաւ. աշխարհ մը, որ հաճելի ժամանցին եւ հրապուրիչ ներկայացումներու նորօրեայ ոճը տեղափոխեց նաեւ դաստիարակութեան ոլորտ եւ շատ յաճախ առաջնորդեց աշակերտներու ուսումնական արդիւնքներու բարելաւման եւ գործօն մասնակցութեան ապահովման։ Ան նաեւ օժանդակեց ուսուցիչին՝ հարստացնելով դասաւանդման մեթոտներու իր պաշարը եւ ամրապնդելով ուսուցողական նպատակակետերու իրագործումը։

Աշակերտներու հետաքրքրութեան խթանիչ ուժ հանդիսանալու կողքին, առցանց ուսումը դարձաւ նաեւ դպրոցներու եւ կրթական հիմնարկներու յառաջդիմութեան չափանիշ եւ երբեմն՝ նորարարութեան հետեւած ըլլալու հպարտանքի աղբիւր. ծնողներ յատուկ գոհունակութեամբ ընդունեցին զայն, խանդավառեցան անոր բարեմասնութիւններով եւ զայն նկատեցին իրենց զաւակներու որակաւոր ուսում ապահովելու երաշխիքը։ Գործածութեան իր այս տարողութեան եւ ձեւաչափին մէջ առցանց ուսուցումը ունեցաւ բարերար ազդեցութիւն ընդհանրապէս, երբ մասնաւոր անոր օգտագործումը տեղադրուեցաւ որակաւոր ուսուցման ծրագիրներու մէջ, իբրեւ օժանդակ եւ ամբողջացուցիչ մեթոտ՝ դասաւանդման տարատեսակ եղանակներու եւ ռազմավարութիւններու կողքին։

Աշակերտակեդրոն ուսուցման գործընթացին կարեւորագոյն բարդորդիչներէն մէկը հանդիսացող առցանց մեթոտը վերջին շրջանին դարձաւ հիմնական եւ միակ ձեւը։ Համաճարակի այս օրերուն դպրոցներն ու համալսարանները դիմեցին այս ձեւին, կրթական ծրագիրներու ամբողջացման համար եւ տուեալ պարտադրուած իրավիճակին մէջ, անկիպ ընկալուեցաւ իբրեւ «փրկարար» ստեղծուած մերօրեայ թոհուօրին մէջ։ Այսպէս, կրթական հաստատութիւններ մանրամասն եւ հետեւողական համադրումով շանցին կարելի եղածին չափ դասանիւթերու ծրագիրները ամբողջացնել, աշակերտ-ուսուցիչ-դպրոց կապի խզումը կասկարգիլ, աշակերտներու զարգացման նպաստող օգտակար հարթակ մը ստեղծել եւ կրթական գործի շարունակականութիւնը ապահովել։ Ուսուցիչներ, բժանդորներ եւ կրկնապատիկ աշխատանքով, փորձեցին առաւելագոյն չափով հասանելի եւ հասկնալի դասաւանդում կատարել, աշակերտը կարգապահ աշխատանքի մղել եւ արժեւորումները կարելիութեան սահմաններուն մէջ արդար կիրարկելի դարձնել։

Աշակերտներու տարիքային առանձնայատկութիւնները նկատի ունենալով, առցանց ուսուցումը տուեալ դասարանին եւ դասանիւթին յարմարեցնելու դիմել կատարուեցաւ՝ երբեմն յաջող, երբեմն թերի կերպով. ծնողներ գործակեցեցան, աշակերտները աշխատեցան, ուսուցիչներ վերադասաւորեցին եւ ձեւափոխեցին համակարգի պահանջներն ու նպատակակետերը։ Դրական եւ յուսալի մօտեցում իրդեգրելով, կարելի է ըսել, թէ աշխատանքը խիստ զնահատելի էր, իսկ արդիւնքը՝ բաւարար։

Ուսուցանել տրվիլ գործընթացը երկկողմանի եւ երկու կողմերուն հասասոր ներդրումը ապահովելու ձգտող կազմակերպուած դրոյթ մըն է, որ կը բաղկանայ հիմնական 3 փուլերէ՝ ծրագրաւորում, կիրառում, արժեւորում։ Իրաքանչիւր փուլ ունի իր պայմաններն ու յաջողութեան չափանիշները։ Այսպէս, ծրագրաւորումի փուլին դժուարութիւնները յարաբերաբար մեծ չեղան. դասի նպատակակետերը ճշդութեան, միջոցի եւ ժամանակի պատշաճեցում կատարուեցաւ, եւ բովանդակութեան փոխանցումի ձեւը առաւելաբար կերդրուացաւ լսողատեսողական բաղկացուցիչներու վրայ։ Ապա այս բոլորին կիրարկումը ունեցաւ յատուկ ժամանակացոյց եւ ճշդուած ժամկետ. այս բոլորը՝ պատահով մը, որուն ետին կանգնող ուսուցիչը փոխանցեց դաս մը, դասեր, որոնք, հակառակ իրենց նորաձեւ բնոյթին, շատ յաճախ եղան նոյնանման, միապաղաղ եւ սահմանափակ։ Աշակերտները շատ յաճախ եղան չեղոք եւ նոյնիսկ կրտուրական, իրենց պատկերն ու ձայնը երբեմն ընտրովի, մութ եւ լուռ։ Արժեւորումը երբեմն դարձաւ անշրջանցելի դժուարութիւն։ Շատ յաճախ անկիպ եղաւ այս պարտաւորութիւն մը, որ անտեսեց արժեւորումը կանխող, եւ անոր պատրաստող աշակերտին իւրացման նպատող եւ զայն ամրապնդող ջալկերը։ Մտահոգութիւններ արձանագրուեցան նաեւ աշա-

կերտներու ներկայացուցած աշխատանքներու ինքնատպութեան մասին, նիշերու արդարացիութեան եւ ժամանակի ճիշդ տնօրինումին մասին։ Այս բոլոր երեւոյթներուն ի տես, կարգ մը մասնագետներ առաջարկեցին տոյն մեթոտը առցանց (online) չկոչել, այլ զայն փոխարինել հեռակայ (distance) ուսուցում եզրով, զայն հիմնաւորելով աշակերտներուն ոչ ամբողջական մասնակցութեան եւ թերի ներկայութեան իրականութեամբ։ Ուրիշներ կատարեցին այն հարցադրումը, թէ արդեօք տեղի ունեցածը իրաւամբ online learning-է, թէ՞ online teaching միայն։ Այլ խօսքով, կատարուածը ուսուցանել է միայն, թէ՞ կայ նաեւ տրվելու եւ իրացումի ապացոյց։

Ի՛նչ անուանում ալ որ տրուի տոյն երեւոյթին, կ'արժէ պահ մը մտածել, թէ ո՞ր է ի՛նչը «offline» գնաց, այս «online» աշխարհին մէջ։ Այս պարագային «offline» երթալը փոխաբերական իմաստով կը վերաբերի այն վատ հետեւանքներուն, զորս կրեցին շատեր եւ դաստիարակչական գործի կարգ մը եակն բաժիններ։-

Ռ՞վ

- Յատուկ կարիքներ ունեցող աշակերտներ, որոնք այս պարագային առիթ չունեցան իրենց դժուարութիւններուն հետեւող եւ լուծումներ գտնող ուսուցիչներ / մասնագետներ ունենալու իրենց կողքին։

- Յատուկ ձիրքեր ունեցող աշակերտներ, որոնք կաղապարուած այս ձեւին մէջ բաւարար չափով կընցան յայտնաբերել եւ զարգացնել իրենց ստեղծագործական կարողութիւնները։

- Բացառութեան երկրորդ առիթին սպասող, միջին կարողութիւններով օժտուած աշակերտներ, որոնք ստիպուած եղան յարմարիլ մատուցուածին միայն։

- Լուսանցքայնացած, ներամփոփ եւ ամէկտ աշակերտներ, որոնք գրեթէ անհետացան այս կշռոյթին մէջ։

- Նիւթական աղբիւրներէ զուրկ, համացանցի եւ էլեկտրականութեան դժուարութիւններ ունեցող աշակերտներ, որոնք անգամ մը եւս սուղ գին կ'ըմբռնէին թուայնացած աշխարհին բարիքները չվայելելուն համար։

- Չարգացումի թերի մակարդակ ունեցող ծնողներու զաւակ-աշակերտներ, որոնք թեքիչ եւ դաստիարակչական օժանդակութիւն չստացան տան մէջ։

- Ոչ գոհացուցիչ աշխատավարձ ունեցող ուսուցիչներ, որոնք յաւելեալ ծանրաբեռնուածութիւն ունեցան, առանց ըստ այնմ զնահատուելու։

Ի՛նչ

- Աշակերտներու առցանց ապահովութիւնը վտանգուեցաւ, երբ մանուկ-պատանի աշակերտներ տարբեր տեսակի առցանց վատ արարքներու զոհ գացին։

- Աշակերտներու ուշադրութիւնը եւ կեդրոնացումը նուազեցաւ, որովհետեւ կարելի չեղաւ անհատական խնամքի առաքիլ դարձնել իւրաքանչիւր աշակերտ։

- Աշակերտները զգօն վիճակի մէջ պահելու ուսուցիչի դեղնակատարութիւնը տկարացաւ, որովհետեւ ուսուցիչը պատատրին ետեւէ լոյկ խօսողի մը վերածուեցաւ՝ հեռու իր յարատեւօրէն աշխուժ վիճակէ։

- Ակադեմական դասանիւթերու սպառիչ քննարկումներուն եւ արտայայտուելու բազմաթիւ առիթներու ընդմէջէն զարգացող լեզուամբ-տածողութիւնը տուժեց՝ իր փյուտակն ազդեցութիւնը ձգելով մարդու իմացական աշխարհի կազմաւորման եւ մտածումի առողջ եւ ճշգրիտ դրսեւորման վրայ։


- Ինքնութեան / ազգային ինքնութեան կազմաւորումը խոչընդոտներու հանդիպեցաւ, որովհետեւ անկիպ առողջ է միայն կրթական հաստատութեան մը ֆիզիքական եւ ընկերաբարոյական միջավայրին մէջ եւ ոչ պատատառի մը ետին։

- Մարդկային տարրը ակամայ անտեսուեցաւ. գործօն մը, որուն առկայութեան համար այնքան կենսական է դէմ - առ-դէմ հաղորդակցութիւնը, եւ առանց որուն աշակերտին մօտ ինքնամփոփ զգացողութիւն եւ ինքնուրոյն մտածողութիւն կարելի չէ երաշխաւորել։

- Միասին ապրելու ոգին, մղիչ ուժը, ժպիտները, ընկերային յարաբերութիւնները, իր նմանին օգնելու, կարեկցելու, անոր հետ վիճելու, մտածում եւ զգացում բաժնելու առիթները չքացան։ Բնականօրէն աղմկարար դասարանի մը շարժու-նութիւնը, խօսակցութիւնները պատատրին ետին խեղդութեան։

- Զննական միջոցի ամրապնդումը մնաց թերի, որովհետեւ պարտաւան-նութիւնները մեծ մասամբ եղան չափա-ւած-ձեւուած եւ առիթ չունեցան հանգամանօրէն քննարկումներ եւ վերլուծումներ կատարելու։

- Դպրոցական առօրեայ ընթացքին ուղղակի թէ անուղղակի միջոցներով կազմաւորուող ինքնակարգապահ մօտեցումը, արտայայտութեան առիթ չունեցաւ, որովհետեւ պատատառի պահանջած կարգապահութիւնը յաճախ մակերեսային եղաւ-թեք-նիքներ եւ ժամկետներ յար-



գել, պարտականութիւններ տեղադրել, տեղեկութիւններ ներբեռնել... այսպիսով, գիտակից կարգապահութիւնը կորուսեցաւ ձեւական սահմանափակումներու մէջ։

- Ուսուցիչի ճկունութիւնը եւ դասաւանդումի ընթացքին ազատ ստեղծագործելը կաշկանդեցան, որովհետեւ շատ յաճախ կարելի չեղաւ դասաւանդումը անմիջականօրէն կանգնեցնել, թիրմացութեան մը կամ թերի ըմբռնումի մը ամբողջական եւ խորքային ճշդումին համար։

- Աշակերտի փոխակերպումին, հարցերուն կամ յառաջընթացին վերաբերող ուսուցիչներու միջամտութիւնները նուազեցան, որովհետեւ այդքան ալ դիւրին չեղաւ առարկայական տուեալներ հաւաքել՝ հետեւողական դիտարկումներով անհրաժեշտ ցուցումներ տալու համար։

- Կրթական համակարգի եւ նպատակներու վերաքննութեան եւ վերաձեւաւորումի անհրաժեշտութիւնը անկայ եր համաճարակէն առաջ։ Վերջերս ստեղծուած ոչ - բնական պայմանները չեն որ մեզ դէմ յանդիման դրին կրթական ոլորտէն ներս անյետաձգելի բարեփոխումներու հրամայականին։ 21-րդ դարու սկիզբէն ի վեր մասնագետներ կը խօսին այս մասին - կրթական նպատակներու վերատեսութիւն, աշակերտներու առաւել մասնակցութիւն, իմաստաւորուած սորվելու հմտութիւններ, կեանքի եւ մարդու բարոյութեան անշուշտ գիտելիքներու ամրապնդում, ստեղծագործ եւ մտածող մարդու կայացում եւ այլն։ Վերջին միւսները սակայն, այս բոլորը վերածննդին հաճախագային, անյետաձգելի աշխատանքի մը, որուն յաջողութեամբ պատկուծ կ'ենթադրէ խոր վերլուծում, իրավիճակի առարկայական քննարկում եւ մասնագիտական հիմնաւորումներ թելադրուած առաջարկներ։

- Յառաջիկայ օրերուն մանկավարժութեան եւ մանկավարժական հոգեբանութեան մարզերուն մէջ կատարուելիք ուսումնասիրութիւնները, փորձարկումները եւ գիտական աշխատասիրութիւնները տակաւին շատ ըսելիք եւ թեւադրելիք պիտի ունենան առցանց ուսուցման մասին։ Տուեալներու հաւաքագրումով եւ վիճակագրական վերլուծումներով կարելի պիտի ըլլայ կատարել, գիտական հիմքերով եզրայնագումներ, որոնք անպայմանօրէն կրնան չիսատատել վերը տեղ գտած դիտարկումները կամ միտքերը։ Ուսումնասիրութիւններու արդիւնքները կրնան յստակօրէն վճռահատել թէ առցանց ուսուցումին դրական կողմերն են աւելի ազդեցիկ, թէ՞ բացասական հետեւանքները։ Սակայն բոլոր պարագաներուն, յստակ իրականութիւն մը կը յայտնուի մեր դիմաց -կրթութեան ապագան եւ կրթական հաստատութիւններու յառաջիկայ աշխատելաճը արմատական փոփոխութիւններ պիտի կրեն, որոնց կեդրոնը պիտի յայտնուի առցանց ուսուցման առաւել տարածումը եւ հետեւողական օգտագործումը։ Դե-տեւաբար, ի՛նչ ալ ըլլան այս ոլորտին մէջ իրենց զիրենց պարտադրող փոփոխութիւնները, պետք է ի մտի ունենալ, թէ անոնք պետք է ծրագրուին եւ կիրարկուին յանուն միտքերու եւ հոգիներու յարատեւօրէն «online» կարգավիճակի մը, ուր կարելի է ուսուցանել եւ սորվիլ՝ վերլուծական զգօնութեամբ եւ մարդկային արժանավայել կեցուածքներով։

ՇԱՐԿ Գ. Խ.

ՆԱԽԱՐԱՐ ՕՀԱՆԵԱՆ - ԳԵՈՐԳԵԱՆ...

Շարունակուած 2-րդ էջէն

Նախարար Օհանեան-Գեորգեանի այցելեց նաեւ «Նըժմէ» մարզական ակումբի նախագահ Ասատ Սաքքալ, որ պահանջեց մարզական ակումբներուն նիւթական օժանդակութիւններ տրամադրել՝ տնտեսական այս սուր տագնապին լոյսին տակ։

Սաքքալ շնորհակալութիւն յայտնեց նախարար Օհանեանի՝ բարձր գնահատելով նախարարութեան մէջ անոր ի գործ դրած ջանքերը։

Միւս կողմէ, 1 յունիսին զուգահիւսող երեխաներու պաշտպանութեան միջազգային տօնին առիթով երիտասարդութեան հարցերու եւ մարմնակրթութեան նախարար Վարդիշէ Օհանեան - Գեորգեան կատարեց թուիթթեան հետեւեալ գրառումը. «Մեր հայեացքները մեր երեխաներուն կը սեւեռենք այնպէս մը, որ անոնք եւ տօնը, յոյսն ու ապագան, եւ այս իրականութիւնը բոլորին ունեւոր կը ծանրացնէ հսկայ պատասխանատուութեամբ մը։ Այդ պատասխանատուութիւնը կ'ենթադրէ հաստատ սիւններու վրայ հիմնել ապահովութեան եւ վստահութեան խարիսխ մը, որով կը կերտուի փայլուն ապագան, որպէսզի մեր երեխաները իրենց երկրին մէջ գոյատեւեն առանց վախի, մտահոգութեան կամ արտագաղթելու մասին մտածելու»։

«ՄԵՐ ԺՈՂՈՎՈՒՐԴԻ ԶԱՒԱԿՆԵՐՈՒՆ ԶԵՐՄՕՐԵՆ ԿԸ ԹԵԼԱԴԻՐԵՆՔ ՀԱՄԱՐԱՐԱԿԻՆ ԴԷՄ ՊԸՇՏՊԱՆՈՒԵԼՈՒ ՀԱՄԱՐ ՆԱԽԱԶԳՈՒՇԱԿԱՆ ՔԱՅԼԵՐՈՒՆ ՀԵՏԵՒԷԼ»

ԱՐԱՄ Ա. ԿԱԹՈՂԻԿՈՍ

Երկուշաբթի, 1 յունիս 2020-ի առաւօտուն Անթիլիասի մայրավանքին մէջ Մեծի Տանն Կիլիկիոյ Արամ Ա. վեհափառ հայրապետին նախագահութեամբ, տեղի ունեցաւ Ազգային Կեդրոնական վարչութեան Կրօնական ժողովին հանդիպումը։ Զննարկուեցան մեր եկեղեցւոյ ու յատկապէս Մեծի Տանն Կիլիկիոյ կաթողիկոսութեան ներքին



կեանքին ու թեմերուն առնչուած շարք մը ծիսական, դաստիարակչական, հրատարակչական, միջեկեղեցական, տեղեկատուական եւ ընկերային ծառայութեան հետ աղերս ունեցող հարցեր։ Յիշեալ բնագաւառներուն շուրջ տրուեցան զեկոյցներ պատասխանատու միաբան հայրերու կողմէ եւ քննարկումներ ետք տրուեցան համապատասխան որոշումներ։

Ժողովի աւարտին վեհափառ հայրապետը հետեւեալ յայտարարութիւնը կատարեց. «Կրօնական ժողովի ընթացքին մենք նաեւ անդրադարձանք համաճարակի հետեւանքներուն եւ այս ուղղութեամբ տարուող աշխատանքներուն՝ թէ՛ եկեղեցական արարողութիւններու, թէ՛ ընկերային ծառայութեան եւ թէ այլ մարզերու մէջ։ Բնականաբար, այս բոլորին մասին տեղեակ պիտի պահենք մեր թեմերը։

«Այս առիթով, կ'ուզեմք կարեւորութեամբ յիշեցնել մեր ժողովուրդի զաւակներուն, որ մեզի համար իւրաքանչիւր հայ արժէք մըն է եւ, հետեւաբար, իր ֆիզիքական, բարոյական ու տնտեսական առողջութիւնը մեզի համար, ինչպէս մեր եկեղեցւոյ ու ազգին՝ կենսական է։ Մենք պիտի շարունակենք մեր լաւագոյնը կատարել այս ուղղութեամբ՝ ծառայութեան ճամբով մեր կարելիութեանց սահմաններուն մէջ։

«Մեր թելադրանքն է, որ համաճարակի ստեղծած այս վտանգալից կացութիւնը դիմագրաւենք բարձրագոյն աստիճանի պատասխանատուութեամբ ու խստապահանջութեամբ՝ մեր անձին, մեր ընտանիքին, մեր բարեկամներուն եւ ընդհանրապէս մեր շրջապատին նկատմամբ։ Կը կրկնեմք. իւրաքանչիւր հայու կեանքը թանկագին է մեր ազգին համար։ Արդ, մեր հայրական թելադրանքն է, որ առողջապահական, պետական ու համայնքային պատասխանատուներուն կողմէ հաստատուած նախազգուշական միջոցներուն հաւատարմօրէն հետեւինք՝ դիմակ գործածելով, ֆիզիքական անհրաժեշտ հեռաւորութիւնը պահելով, մեր ձեռքերը յաճախ լուայով եւ հեռու մնալով բազմախումբ հաւաքներէ։ Վստահ ենք, որ իւրաքանչիւր հայրորդի կարեւորութեամբ նկատի պիտի առնէ համաճարակին դէմ պաշտպանուելու համար հաստատուած այս ազդու միջոցները»։



սեղմ տողերուն մէջ կու գան ուրախութեամբ լիբանանահայութեան եւ յատկապէս անոր ազգանուէր կառոյցներուն յայտնել, թէ 1 յունիս 2020-ին, ձեռամբ՝ Լիբանանի մէջ Հայաստանի Հանրապետութեան լիազօր եւ արտակարգ դեսպան, վսեմաշուք՝

Տիար ՎԱԶԳԱ ԱՅԱՔԵԿԵԱՆ-ի ստացած են Տիկին ԱՆՆԱ ՅԱԿՈԲԵԱՆ-ի Կեդրոնիկ կատարած յատուկ ներդրումը՝ 10.000. 000 լ. ոսկի։

Բոլորիս ծանօթ է, թէ իբրեւ լրագրող, նաեւ իբրեւ կողակիցը՝ Հայաստանի Հանրապետութեան վարչապետ՝ տիար Նիկոլ Փաշինեանի, տիկին Յակոբեանի դիպուկ սեր, խանդավառանք եւ մտադրացումներ ունի հայրենիքի թէ սփուռքի Յատուկ դաստիարակութեան զարգացողական ծրագիրներուն նկատմամբ։

Շնորհակալութիւն օրէ-օր զարգացող սիրով օղակներուն համար։

«ԶՈՒՐԹՆՈՑ» ԿԵՐՈՒՆ ԿԱՐՉՈՒԹԻՆ ԵՒ ՏՆՕՐԵՆՈՒԹԻՆ

ՀԱՄԱԶԳԱՅԻՆԻ Մ. ԵՒ Հ. ԱՐՍԼԱՆԵԱՆ ԴԵՄԱՐԱՆԻ ՍԱՆԵՐՈՒ ՖՈՐՏԻՆ

Մարի Թերեզ Ռումուլեանի, Մարի Տաիքը Մասսու-հի եւ Գրիգոր Եսքիճեանի մահուանց յիշատակին - Մ. եւ Հ. Արսլանեան ճեմարանի տնօրէնութիւնը, ուսուցչական կազմը եւ պաշտօնութիւնը 450.000 լ. ոսկի

«ՔՈՐՈՆԱ»-Ի ՊԱՏՃԱՌՈՎ ԽԽՍՏ ՍԱՀՄԱՆԱՓԱԿՈՒՄՆԵՐ ԶԿԻՐԱՐԿԱԾ ՇՈՒԷՏԻ ՄԷՋ ԳՈՐԾԱԶՐԿՈՒԹԵԱՆ ՄԱԿԱՐԴԱԿԸ ԲԱՐՁՐԱՅԱԾ Է

Շուէտի մէջ գործազրկութեան մակարդակը ապրիլին 6,7 առ հարիւրէն հասած է 7,9 առ հարիւրի, հակառակ անոր որ իշխանութիւնները մերժած էին «Քորոնա» ժահրի դէմ պայքարի ծիրին մէջ խիստ սահմանափակումներ հաստատել: Այս մասին կը հաղորդէ «Պլումպըրկ»-ը:



Փորձագետներուն կարծիքով՝ Շուէտի մէջ գործազըրկութեան մակարդակը կրնայ հասնիլ 17 առ հարիւրի, եթէ պարտադիր արձակուրդի ուղարկուած քաղաքացիները մօտիկ ապագային չվերադառնան իրենց աշխատանքին:

Շուէտի իշխանութիւնները կը շարունակեն աշխատանքի համակարգի բարեփոխումներու մասին քննարկումները, որոնց համաձայն, գործատուները կրնան պարզ ճամբով, աւելի քիչ ծախսով մարդիկ աշխատանքէ հեռացնել:

Այս առաջարկը յառաջացուցած է դժգոհութիւն շարք մը սենտիքաներու, ինչպէս նաեւ ընդդիմութեան մօտ, որուն ներկայացուցիչները կը սպառնան անվստահութիւն յայտնել վարչապետին, եթէ այդ փոփոխութիւնները ուժի մէջ մտնեն:

Նշենք, որ Շուէտի մէջ «Քորոնա» ժահրով վարակուածներուն թիւը 33.843 է, իսկ մահացածներունը՝ 4029:

ՊԱՊԱԶԱՆ. «ՊԻՏԻ ՊԱՇՏՊԱՆԵՆՔ...»

Շարունակուած Ա. Էջէն

«Յրանդ Տինք» հիմնադրամին ուղղուած սպառնալիքները խտրականութիւնը խթանող քաղաքական մթնոլորտի հետեւանք են: Պիտի պաշտպանենք խտրականութեան ու ցեղապաշտութեան դէմ որբէլ քայլ եւ միևակ պիտի չձգենք ընկերները», թուիթըրեան իր էջին վրայ գրած է թրքական քաղաքական կեանք վերադառնալու յայտ ներկայացուցած ժողովրդավարութիւն եւ յառաջընթաց կուսակցութեան ղեկավար Պապաշան:

Օրեր առաջ անձնաթու անձ մը Յրանդ Տինք հիմնադրամին կոչ ուղղած էր «Եղբայրութեան հեքիաթներն» հրաժարելու եւ անյապաղ լքելու երկիրը, իսկ Ռաքէյ Տինքին եւ հիմնադրամի փաստաբանին ե-նամակով «գիշեր մը յանկարծակի կրնաք գալ» բովանդակութեամբ նամակ ուղարկած էր: Այդ արտայայտութիւնը շատ օգտագործուած է եւ կ'օգտագործուի թուրքերու կողմէ: Յրանդ Տինքը սպաննելէ առաջ նոյնպէս նման տողերով հաղորդագրութիւն ուղարկած էին: Թուրքիոյ նախագահ Ռեճեփ Թայիփ Էրտողանն ու թուրք բարձրաստիճան անձեր Սուրիա եւ Իրաք ներխուժելէ առաջ նոյնպէս նման սպառնալիքներ տարածած էին:

Ռաքէյ Տինքին եւ հիմնադրամին սպառնացած անձը արդէն ձերբակալուած է: Ի յայտ եկած է, որ յանցագործը գործած է ազդալեճանցի սիրեցեալի ազդեցութեան տակ եւ յորդորով:

ԺԱՏՖԱՐԻ ՄԻԱՅԵԱԼ ...

Շարունակուած Ա. Էջէն

Ան դիտել տուաւ, որ այդ ոճիրին նպատակը ոչ միայն սուրիական տնտեսութիւնը հարուածելն է, այլ սուրիացի հողագործները ուղղակի կերպով շանթաժի ենթարկելը, ահաբեկելը, արքատացնելն ու տեղահանելը, ինչպէս նաեւ զանոնք ստիպել, որ իրենց բերքը ծախեն ահաբեկչական կազմակերպութիւններուն ու անջատողական **միլիսներուն** եւ զանոնք մաքսանենգել դէպի թրքական հողեր:

ՄԱԿ-ի մէջ Սուրիոյ դեպքանը նաեւ նշեց, որ բերքերը հրկիզելու կողքին «թրքական բռնագրաւումի ուժերն ու անոնց վարձկանները» գողցած են բերքերը: Թրքամետ ահաբեկչական խմբաւորումները 26 մայիսին բերքահաւքի մեքենաներ բերած են Յասաքէի հիւսիսային գիւղական շրջանին մէջ բռնագրաւեալ Ռասուլ Այնի շրջան եւ գողցած հողագործներուն բերքը եւ զայն մաքսանենգած դէպի թրքական հողեր:

Ժաաֆարի նաեւ լուսարձակի տակ առաւ այն, որ, հակառակ ՄԱԿ-ի, Ներառեալ անոր ընդհանուր քարտուղարին եւ Սուրիոյ հարցով յատուկ պատուիրակին «Քորոնա» ժահրին դէմ պայքարելու համար Սուրիոյ ժողովուրդին դէմ հաստատուած տնտեսական միակողմանի պատժա-միջոցները չեղարկելու կոչերուն, ամերիկեան կառավարութիւնն ու Եւրոպական Միութիւնը քանի մը օր առաջ հրապարակած են այդ պատժամիջոցները խստացնելու երկու որոշումներ:

Ի ՊԱՏԱՍԽԱՆ Ս. ՍՈՅԻԱՅԻ ՄԷՋ ՂՈՒՐԱՆԻ ԸՆԹԵՐՑՄԱՆ` ՅՈՒՆԱՍՏԱՆԻ ՄԷՋ ՄՉԿԻԹԻ ՎՐԱՅ ԿԱԽՈՒԱԾ Է ՅՈՒՆԱԿԱՆ ԴՐՕԸ

Անձանօթ անձեր Թուրքիա-Յունաստան սահմանին վրայ գտնուող Տիմոթէքա քաղաքին մէջ գտնուող Զեւէպի Մեհմեթ պատմական մզկիթի միևարեթէն կախած են յունական դրօշ, որ վերցուած է միայն այն ատեն, երբ քաղաքացիտարանը զայն նկատած է:

579-ամեայ մզկիթը կը գտնուի թուրք-յունական սահմանին վրայ՝ Ետիրնէ շրջանի Ուզունքեօփրու քաղաքին դիմաց, ինչ աւելի գրգռած է թուրքերը:

Տիմեթքի քաղաքապետ Ռամփու Յաճիանօլլու յայտարարած է, որ դէպքը տեղի ունեցած է շաբաթ կամ կիրակի օր, եւ ոստիկանութիւնը արդէն հետաքննութեան սկսած է:

Միջադէպը մեծ աղմուկ բարձրացուցած

ԾԵՐԱԿՈՅՏԸ ՀԱՄԱՆՈՒԹԻՒՆ ՏՈՒԱԾ Է ԱԶԳԱՅԻՆ ՀԵՏԱԽՈՒՁՈՒԹԵԱՆ ՏՆՕՐԷՆԻ ՊԱՇՏՕՐԻՆ ՃՈՆ ՌԵԹՔԼԻՖԻ ԹԵԿՆԱԾՈՒԹԵԱՆ

Ծերակոյտը հաւանութիւն տուած է թէկնածութեան Ազգային հետախուզութեան տնօրէնի պաշտօնին Յանրապետական կուսակցութենէ ներկայացուցիչներու տան անդամ Ճոն Ռեթքլիֆի, որ առաջադրուած էր Միացեալ Նահանգներու նախագահ Տանըլտ Թրամփի կողմէ: Այս մասին կը հաղորդէ «Ամերիկայի ձայն»-ը:

Ծերակուտականներու որոշումը կը նկատուի իբրեւ յաղթանակը Թրամփի, որ արդէն Երկրորդ անգամ վարչական քարձի պաշտօնի կ'առաջադրէ Ռեթքլիֆը, որ ունի պաշտպանողական հայեացքներ: Ծերակուտականները անոր թէկնածութեան թեր քուէարկած են 49 ձայնով:

Դեմ քուէարկած են 44 ծերակուտականներ: Դեմով-րատականները անոր թեկնածութեան կոշտ դիմադրութիւն ցուցաբերած են:

«Ռոյթըրզ» կը նշէ, որ Ռեթքլիֆ պաշտօնը պիտի ստանձնէ անվտանգութեան սպառնալիքներու լայն միջավայրի պայմաններու մէջ, Ներառեալ «Քորոնա» ժահրի համաճարակը, Զինաստանի հետ սուր մրցակցութիւնը եւ այն սպասումները, որ Ռուսիան պիտի փորձէ միջամտել Միացեալ Նահանգներուն 2020-ի նախագահական ընտրութեան:

Անցեալ տարուան յուլիսին Թրամփ առաջին անգամ յայտարարած էր, որ Ազգային հետախուզու-

թեան»:

«Այն պահուն, երբ մեր երկիրը միասնականութեան կը ձգտի, նախագահ Տանըլտ Թրամփ զայն կը պառակտէ», նշեցին անոնք՝ աւելցնելով. «Այս թուար պահուն Միացեալ Նահանգներ իսկական ղեկավարութեան պէտք ունին»:

«Թրամփ կը շարունակէ սադրանք, կոյր ծայրայեղականութիւն ու բռնարարքներ հրահրել, ինչ որ վախկոտութիւն, տկարութիւն է եւ՝ շատ վտանգաւոր», յայտնեցին անոնք:

Ներկայացուցիչներու տան արտաքին յարաբերութիւններու յանձնախումբի նախագահ Էլիըթ Էնկըլ իր կարգին նշեց. «Թրամփ ցուցարարները ահաբեկիչներ որակեց եւ քաղաքացիներուն սպառնաց բանակով: Անոր խօսքերն ու արարքները յաւելեալ բռնարարքներ կը հրահրեն եւ ցոյց կու տան, որ կազմակերպ ցեղապաշտութեան հարցի լուծման մէջ շահ չունի: Զաղաքացիները կը պոռան, որպէսզի իրենց ձայնը լսէ, եւ ուժերու տեղակայման մասին անոր խօսքը կը նշանակէ, թէ ան անոնց մտիկ չ'ըներ»:

«Ռոյթըրզ» լրատու գործակալութիւնը հաղորդեց, որ Ֆրանսայի մայրաքաղաք Փարիզի մէջ տասնեակ քաղաքացիներ մասնակցած են Ֆրանսայի մէջ Միացեալ Նահանգներու դեսպանատան դիմաց կազմակերպուած ղեցողքի ցոյցին:

Ցոյցը կազմակերպուած է ֆրանսական հակացեղապաշտական շարժումին կողմէ՝ յաջակցութիւն Միևիափոլիսի մէջ սեաւմորթ ճորճ Ֆլոյտի սպանութենէն ետք Միացեալ Նահանգներու մէջ ցոյց կատարող քաղաքացիներուն:

ԱՄՏՐԻՈՅ ԱԶԳԱՅԻՆ ԽՈՐՀՈՒՐԴԸ ...

Շարունակուած Ա. Էջէն

Վարչապետ Նիկոլ Փաշինեանը կէս տարի ետք հրաժարական տուաւ նոր խորհրդարանական ազատ ընտրութիւններ ապահովելու համար, ինչ որ նոյնպէս ողջունուեցաւ ԵԱՀԿ-ի կողմէ: Յայաստանը մեծ յառաջընթաց կ'արձանագրէ ժողովրդավարական փոփոխութիւններու, փտածութեան դէմ պայքարի, դատաիրաւական համակարգին մէջ սահմանադրական բարեփոխումներու գործընթացին մէջ:

Համաձայնագիրի երկրորդ կարելոր բաղադրիչը ազատ առետուրն է: Յայաստան յատուկ դերակատարութիւն ունի ԵԱՏՄ-ի եւ Եւրոպական Միութեան միջեւ յարաբերութիւններուն մէջ: Յայաստանը ԵԱՏՄ-ի անդամ է: Համապարփակ եւ ընդլայնուած գործընկերութեան համաձայնագիրի վաւերացումով կը մեծնան ԵԱՏՄ-ի հսկայ շրջանին մէջ Աւստրիական ընկերութիւններու մուտքի հնարաւորութիւնները: Յայաստանի համար երկու ուղղութիւններով լաւ յարաբերութիւնները կարելոր են: Յայաստանը աշխարհագրականօրէն բարդ դրութեան եւ ծանր հակամարտութեան մէջ է իր երկու դրացիներուն հետ: Երկրին մէջ կը բնակի 3 միլիոն մարդ, եւս 3 միլիոն հայեր կը բնակին Եւրոպայի մէջ, որոնցմէ 5000-ը Աւստրիոյ քաղաքացի են: Արդէն նշեցի մեր բազմադարեայ կապի մասին: Շուրջ 200 տարի, Վիեննայի մէջ կը գտնուի Միխիթարեան միաբանութեան եկեղեցին՝ իր հրաշալի թանգարանով եւ գրադարանով: Վիեննայի մէջ կը գտնուին նաեւ Յայ եկեղեցւոյ Եւրոպայի թեմի եպիսկոպոսի նստավայրը: Համագործակցութեան առումով Յայաստանը մեզի համար կեդրոնական երկիր է: Ելոյթս աւարտեմ 1915-1916 թուականներուն տեղի ունեցած Ցեղասպանութեան մասին խօսքով: Ցաւօք, բոլոր պետութիւնները չէ, որ ճանչցած են Ցեղասպանութիւնը: Երեւանի մէջ Ցեղասպանութեան յուշահամալիրին մէջ կը փողփողի Ցեղասպանութիւնը ճանչցած 32 պետութիւններու դրօշները: Անոնց կարգին հպարտութեամբ կը տեսնենք նաեւ Աւստրիոյ դրօշը: Անոր համար շնորհակալութիւն պէտք է յայտնեք մեր Նախորդ գումարման խորհրդարանի խմբակցութիւններուն: Յայաստանի համար շատ կարելոր է Ցեղասպանութեան ճանաչումը: Մեզմէ շատերը Ցեղասպանութեան մասին գիտեն Ֆրանց Վերֆելի «Մուսա Լերան 40 օրը» վէպէն: Վատահ եմ, որ այսօր օրակարգի վրայ գտնուող վաւերացման ենթակայ 7 համաձայնագիրներու շարքին կը վաւերացուի նաեւ Յայաստան-Եւրոպական Միութիւն համապարփակ եւ ընդլայնուած համագործակցութեան մասին համաձայնագիրը»:

ԼԻՊԻԱԿԱՆ ՀԱԿԱՄԱՐՏՈՒԹԵԱՆ...

Շարունակուած Ա. Էջէն

Դիւանագետները յոյս ունին, որ զինադադարը պիտի իրականացուի ոչ միայն բառերով, այլ բանակցութիւնները եւս պիտի արտօսեն հասնիլ նաեւ մարդասիրական զինադադարի, որպէսզի իշխանութիւններուն հնարաւորութիւն ընձեռուի կեդրոնանալու «Քորոնա» ժահրի հետեւանքներու դէմ պայքարին վրայ:

«ՄԱԿ-ը յոյս ունի բանակցութիւններու նոր փուլի, որ տեղի պիտի ունենայ տեսաժողովի ձեւաչափով», ըսւած է յայտարարութեան մէջ:

ԿԱՌԱՎԱՐՈՒԹԻՒՆԸ ԸՆԴԳԾԵՅ ...

Շարունակուած 2-րդ էջէն

«Յոյցեր կատարելը իրաւունք է, սակայն մեր մադթանքն է նաեւ, որ անոնք կատարուին օրէնքի համաձայն, որպէսզի ո'չ ժողովուրդը վնասուի, եւ ո'չ ալ ապահովութեան ուժերը», յայտնեց ան:

Ապտել Սամատ նշեց նաեւ, որ նշանակումները յետաձգուած են յառաջիկայ շաբթուան:

Ներքին գործոց եւ քաղաքապետութեանց հարցերու նախարար Սոհամետ Ֆահմի Նիստեն ետք յայտնեց, որ ինքնաշարժներուն զոյգ եւ անզոյգ թիւերով երթեւեկելու օրէնքին գործադրութիւնը պիտի շարունակուի՝ աւելցնելով, որ այդ օրէնքը կառավարութեան որոշումով պարտադրուած է:

Անդրադառնալով ցոյցերուն՝ Ֆահմի յայտնեց, որ խաղաղ ցոյցը արտօնելի է, սակայն ընդվզումներ յառաջացնելն ու ճամբաները փակելը արգիւրուած են: «Եթէ ժողովրդային շարժումի ցոյցերը խաղաղ են, ապա դուք զիս այդ ցոյցերուն առաջնագիծին վրայ պիտի գտնեք», ըսաւ ան:

Ֆահմի նշեց, որ Պաշտպանութեան գերագոյն խորհուրդը իր Նիստը պիտի գումարէ յառաջիկայ շաբաթավերջին՝ քննարկելու համար ընդհանուր զորաշարժը:

Ներքին գործոց նախարարը ընդօժեց, որ կարմիր մոմով փակուած 90 լումայափոխներուն վաճառատուները այսօր իրենց դռները պիտի վերաբանաւ:

Վարչապետ Տիպպ ընդունեց նաեւ վառելանիւթի կա-յարաններու սեփականատերերու սենտիքայի մէկ պատ-իրակութիւնը, գլխաւորութեամբ՝ սենտիքայի նախագահ Սամի Պրաքսի:

Հանդիպումէն ետք Պրաքս յայտարարեց, որ վառելա-նիւթի տազնապ չկայ՝ հաստատելով, որ այսօրուընէ սկսեալ վառելանիւթի բաշխումը պիտի բարելաւուի:



«ՔՈՐՈՆԱ»-Ի ՃԳՆԱԺԱՄԱՅԻՆ ՇՏԱՊԻ ԹԷԺ ԳԻԾՆ Է (HOTLINE) 03-188911